ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1965 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հանրապետության գիտական լայն հասարակայնությունը նշեց հայագիտության նշանավոր դեմքերից մեկի՝ խոշոր ազգագրագետ, բանագետ-բանահավաք, հնագետ Երվանդ Լալայանի ծննդյան 100-ամյակը։

Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի հոբելյանական նստաշրջանը՝ նվիրված այդ նշանավոր տարեթվին ներածական խոսքով բացեց ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Գ. Ներսիսյանը։

Ե. Լալայանի հնագիտական գործունեությանն էր նվիրված դոկտոր-պրոֆեսոր Կ. Գ. Ղաֆադարյանի «Ականավոր հայագետը» զեկուցումը։ Զեկուցողը նշեց, որ հնագիտության բնագավառը միշտ էլ եղել է Ե. Լալայանի ուշադրության կենտրոնում։ Նրա ստեղծած «Ազգագրական հանդեսի» բոլոր համարներում տպագրվել են տեղեկություններ պատմական Հայաստանի տարբեր շրջաններում հայտնաբերված հնագիտական նյութերի, պատմական հուշարձանների մասին, վերծանվել վիմական արձանագրություններ և այլն։

Ե. Լալայանը մամուլի և հրապարակային դասախոսությունների միջոցով միշտ կրքոտությամբ հանգես է եկել պատմական հուշարձանների պահպանության օգտին՝ ամբողջ Անդրկովկասում, զբաղվել է հնագիտական պեղումներով։ Նա պեղումներ է կատարել Շարուր-Դարալագյազում, Նախիջևանում, Նոր Բայազետում, Շրեշ-բլուրում, Էյլարում, Նիժ և Վարդաշեն գյուղերում։ Նրա հայտնաբերած նյութերի մեծ մասը պահվում էին Թիֆլիսում՝ ազգագրական թանգարանում, որոնց բազայի վրա 1922 թ. կազմակերպվեց Հայաստանի պետական պատմական թանգարանի հնագիտական բաժինը։

Անվանի գիտնականը գրել է մի շարք հնագիտական հոդվածներ, կարդացել հրապարակային զեկուցումներ։ 1931 թ. Երևանում լույս է տեսնում «Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում» գիրքը, որն ամփոփում է Ե. Լալայանի կարևոր հնագիտական աշխատությունները։

Ե. Լալայանի ազգագրական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Կ. Վ. Մելիք-Փաշայանը։ Զեկուցողը նշեց, որ «Ազգագրական հանդեսի» հրատարակությունը խոշոր երևույթ էր հայ իրականության մեջ, որով սկիզբ դրվեց հայ գիտական ազգագրությանը։ Հանդեսը հրատարակվեց 26 գրքով՝ 20 տարվա ընթացքում (1896—1916 թթ.)։ Լալայանը բացատրելով հանդեսի հիմնական նպատակը՝ նյութը կորստից փրկելը, «Հանդեսի» Ա համարում գրում է. «Մենք կկրենք քարերը և երանի նրան, ով կգա այդ քարերով ազգային ինքնուրույնության շեները կառուցանելու և համամարդկային էվոլյուցիոնի օրենքները դնելու»։

Այնուհետև զեկուցողը կանգ է առնում Ե. Լալայանի կողմից 1900 թ. Թիֆլիսում հիմնադրված Ազգագրական հրատարակչական ընկերության աշխատանքների բնութագրման վրա։ 1906 թ. այդ ընկերությունը վերակազմավորվում է Հայոց ազգագրական ընկերության և իր գոյության շուրջ 10 տարիների ընթացքում հսկայական աշխատանք է կատարում ազգագրական նյութեր հավաքելու և դրանք կորստից փրկելու գործում։ Ընկերության որոշմամբ Թիֆլիսում կազմակերպվում է ազգագրական թանգարան, որը շուտով բավականին հարստանում է շնորհիվ Ե. Լալայանի ջանքերի և հասարակության լայն խավերի մասնակցության։ Թանգարանը հետագայում տեղափոխվում է Խորհրդային Հայաստան, որի բազայի վրա հիմնվում է Հայաստանի պետական պատմական թանգարանը Ե. Լալայանի ղեկավարությամբ։ Ե. Լալայանը հեղինակ է մի շարք արժեքավոր ազգագրական աշխատությունների և մենագրությունների՝ «Ջավախք», «Սիսիան»,

«Նոր-Բայազետ», «Վասպուրական», «Գանձակի գավառ» և այլն, որոնք մինչև այժմ էլ մնում են անգերազանցելի։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Նաղինյանը հանդես եկավ «Երվանդ Լալայանը որպես բանահավաք-բանագետ» զեկուցմամբ։ Նա նշեց, որ Ե. Լալայանը ժողովրդական բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ և իր ազգագրական աշխատություններում մեծ տեղ էր հատկացնում բանահյուսական նյութերին։ «Ազգագրական հանդեսի» էջերում պարբերաբար տպագրվել են ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր, որոնք առնչվել են ազգագրական այս կամ այն սովորույթին։ Բացի այդ, ինչպես նշում է զեկուցողը, «Ազգագրական հանդեսի» էջերում պարբերաբար տպագրվել են տարբեր շրջանների բանահյուսական խառն նյութերի ժողովածուներ (Բորչալուի, Վասպուրականի բանահյուսությունից) կամ առանձին ժանրի նյութեր (վիճակի երգեր)։ Կարևոր արժեք են ներկայացնում Ե. Լալայանի կողմից գրի առնված «Սասնա ծռերը» վեպի Նոր-Բայազետի, Վանի, Ալաշկերտի պատումները, «Ռոստոմ-Զալ» իրանական վեպի հայկական տարբերակը, որոնք տպագրվել են «Ազգագրական հանդեսի» էջերում։

Ե. Լալայանը իր գործունեության ամբողջ ընթացքում անձամբ հավաքել ու գրի է առել ժողովրդական բանահյուսության բազմաթիվ նյութեր։ Ժողովրդական բանահյուսության գանձերի փրկելը նա համարել է ամբողջ ազգի գործ և միշտ մամուլի, զեկուցումների միջոցով կոչ է արել հայ մտավորականներին գավառներում զբաղվել այդ գործով։ Իր հավաքած նյութերը նա հրատարակել է առանձին ժողովածուներով («Զավախքի բուրմունքը» և այլն)։ Հայ բանահյուսության մեծարժեք գործերից է Ե. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուի երեք հատորները, որտեղ զետեղված են 91 հեքիաթ, որոնք հեղինակը գրի է առել 1912—14 թթ. Արարատյան դաշտավայրում և Ապարանում։ Լալայանի «Պառավաշունչ» ժողովածուն պարունակում է Զավախքի չորս հեքիաթները։ 1915 թ. Ե. Լալայանը ձեռնարկում է հայրենասիրական մեծ գործ. կազմակերպում է բանահյուսական արշավախումբ՝ Արևմտահայաստանից գաղթած և Անդրկովկասում ապաստան գտած հայերից բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով։ Արշավախմբին մասնակցում էին մի շարք հայրենասեր մտավորականներ, որոնք նույնպես գաղթել էին Արևմտյան Հայաստանից (Նազարեթ Մարտիրոսյան, Սենիքերիմ Շալճյան, Արտաշես Բարսեղյան, Շահեն Կուժիկյան և այլոք)։ Զգալի մեծ դժվարություններ հաղթահարելով արշավախումբը Ե. Լալայանի ղեկավարությամբ տանջահար ու սովալլուկ գաղթականներից 1915—1916 թթ. գրի է առնում շուրջ 800 հեքիաթ, զրույց ու ավանդություն, բազմաթիվ երգեր, բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործություններ։ Լալայանը թողել է հսկայական բանահյուսական ժառանգություն։ ՀՍՍՌ ԳԱ հրատարակությամբ լույս տեսնող «Հայ ժողովրդական հեքիաթների» տասից ավելի հատորները ընդգրկում են Ե. Լալայանի հավաքած նյութերը, որը և կհավերժացնի նրա հիշատակն ու մայր ժողովրդի համար կատարած նրա մեծ ծառայությունը։

Զեկուցումներից հետո Լալայանի մասին հետաքրքիր հուշերով հանդես եկան պրոֆեսոր-դոկտոր Կ. Մելիք-Ոհանջանյանը և ՀՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Մ. Հասրաթյանը։

Ա. ՂԱԶԻՅԱՆ